

Այս մատուռէն դուրս, դէպի հարաւ, կը տեսնուին կործանուած կամարներ եւ աղեղնածէ զարդեր (arceau), հին վանքի մը մնացորդը: Պատերը լաւ շինուած են եզերքները տաշուած կմբաւոր քարերով (bossage): Արեւմուտքէն կարելի է մտնել բակի մը մէջ, ուր միակտուր սիւնի մը վրայ, կը բարձրանայ քարէ կամարի հատուածը (segment) ցած սրածայրով. ասիկա կամարի մը մնացորդն է, և միւս մասը փլած: Քանի մը քարեր շեղակի քանդուած են, բայց անոնց վրայ չեն տեսնուիր որմաղրի նշանները:

Բակին հիւսիսային կողմի ճեմելիքէն, նեղ աստիճան մը կը տանի վերեւ յիշատակուած վերնայարկ եկեղեցին, որուն պատերուն վարի մասը միայն մնացած է, կողակը և սեղանը կարելի է գծել: Եկեղեցիին ներսի կողմը, յանցելումն, կճակով (stuc) ծեփուած էր և կային որմանկարներ: Կճածեփին վրայ կը նըշմարուին շատ մը որմագիրներ (graffito) և քարի մը վրայ կոշտօրէն քանդակուած է քահանայապետին եփուտը (éphod) կամ վակասը. այս քանդակը շինուած է անտարակոյս համաձայն աւանդութեան մը՝ որ անճշտօրէն կ'ենթադրէ թէ Զաքարիան քահանայապետ մ'էր: Կողակին հարաւային կողմը կը գտնուի աւազանը: Յետոյ մատուռին կողմը, զարձեալ դէպի հարաւ, կը տեսնուին խուցերու և աստիճաններու հետքեր: Այս աւերակները մասամբ մը ծածկուած էին գետնին տակը մրգաստանի մը՝ որ երբեմն կը ծածկէր բոլոր այս տեղերը, ուր գտնուած են մատուռը, խուցերը եւ ուրիշ չէնքեր: Քարէ յիշատակարաններու պակասը ցոյց կու տայ թէ այս վանքին շինութիւնը ժ. դարու չի վերաբերի և թէ Խաչակիրներու ժամանակ շինուած չէ ան: Այս տեղ կան երկու ազդիւրներ»։ (S^h's Survey of W. Palestine, Mémoires III. Londres. 1883, էջ 60-61):

5. Նոյն եկեղեցւոյն առանձնայայտ թիւնները .

Պողեստինագէտ Մէյսթէրման՝ իր վերագոյն յիշատակուած երկասիրութեան մէջ, նկատի կ'առնու թէ բոլոր այցելուք՝ եկեղեցիէն աւելի ուշադրութիւն գարձուցած են վանքին աւերակներուն. ան կը յարէ թէ եկեղեցին կը ներկայացնէ յատկանշական և հրահանգիչ քանի մը առանձնայատկութիւններ, որ կը թուի թէ խուսափած են նոյն այցելուներու ուշադրութենէն. իր